



Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» ՓԲԸ տնօրենների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են առ 31 դեկտեմբերի 2014թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե սխալի, թե խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք աուդիտորական եզրակացությանը կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք աուդիտորի վարքագծի կանոններին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ինչը ներառում է նաև ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ, և թե սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը, որքանով այն տեղին է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական այնպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաև ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

Մենք գտնում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2014թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Արթուր Հարությունյան

Տնօրեն

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

29 ապրիլի 2015 թ.

Անուշ Գրիգորյան

Աուդիտի մենեջեր



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	31.12.2014թ.	31.12.2013թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ		-	266
Երկարաժամկետ բանկային ավանդներ	6	-	1,636,713
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		-	1,636,979
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	7,707,444	3,249,038
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		45	68
Տրված ընթացիկ կանխավճարներ	8	2,315,020	2,239,771
Դրամական միջոցներ	9	45,553	299,021
Կարճաժամկետ բանկային ավանդներ	6	1,909,918	4,229,492
Շահութահարկի գծով կանխավճար		5,611	-
Այլ ընթացիկ ակտիվներ	10	1,312,940	409,027
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		13,296,531	10,426,417
Ընդամենը ակտիվներ		13,296,531	12,063,396
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	11	11,667,898	10,902,767
Կուտակված շահույթ		976,860	364,701
Ընդամենը սեփական կապիտալ		12,644,758	11,267,468
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		135	72
Շահութահարկի գծով պարտավորություն		-	78,385
Ընթացիկ պահուստներ	12	651,639	717,471
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		651,773	795,928
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		13,296,531	12,063,396

Տնօրեն

Արմեն Գյուլիսայան



29 ապրիլի 2015 թ.



Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակույան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 9-ից 30-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Էջ 5՝ 30-ից

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	2014թ.	2013թ.
Հասույթ		-	-
Վաճառքի ինքնարժեք		-	-
Համախառն շահույթ		-	-
Վարչական ծախսեր	13	(44,820)	(41,260)
Ֆինանսական ներդրումներից եկամուտներ	14	308,502	430,033
Այլ գործառնական եկամուտ		-	2,401
Տոկոսային ծախսեր	15	(71,028)	(86,432)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ		471,724	140,305
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		664,378	445,047
Շահութահարկի գծով ծախս	16	(52,219)	(78,385)
Շահույթ (վնաս) հարկումից հետո		612,159	366,662
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		612,159	366,662

Տնօրեն


Արմեն Գյուլիսայան



29 ապրիլի 2015 թ.

Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակոսյան





Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2013թ.	500,001	10,402,766	(1,961)	10,900,806
Բաժնետոմսերի թողարկում	10,402,766	-	-	10,402,766
Սեփական կապիտալի այլ տարրեր	-	(10,402,766)	-	(10,402,766)
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	-	366,662	366,662
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013թ.	10,902,767	-	364,701	11,267,468

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2014թ.	10,902,767	-	364,701	11,267,468
Բաժնետոմսերի թողարկում	765,131	-	-	765,131
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	-	612,159	612,159
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2014թ.	11,667,898	-	976,860	12,644,758

Տնօրեն

Արմեն Գյուլիսայան




29 ապրիլի 2015 թ.



Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակույան



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 9-ից 30-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Էջ 7' 30-ից

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2014թ.	2013թ.
Գործառնական գործունեությունից հոսքեր		
Այլ մուտքեր	-	2,452
Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերումից (ներառյալ տրված կանխավճարները)	(5,577,079)	(4,775,810)
Նյութերի, ապրանքների ձեռքբերումից	(978)	(628)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,997)	(2,198)
Վճարումներ պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	-	(30)
Վճարված հարկեր՝ բացի շահութահարկից	(66)	-
Վճարված շահութահարկ	(136,215)	-
Բանկային ծառայությունների (արտարժույթի փոխանակման) գծով	(37,585)	(36,327)
Այլ ելքեր	(185)	(1,020)
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	(5,755,105)	(4,813,561)
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Բանկային ավանդների մարում	4,447,800	11,776,614
Բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսներ	434,772	134,423
Ներդրում բանկային ավանդներում	-	(17,464,291)
Այլ կազմակերպությունների բաժնեմասերի ձեռքբերումից ելքեր	(995,429)	-
Այլ կազմակերպությունների բաժնեմասերի օտարումից մուտքեր	995,429	-
Հիմնական միջոցների ձեռքբերումից	-	(606)
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	4,882,572	(5,553,860)
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Ստացված վարկերից	1,058,539	-
Ստացված վարկերի մարումից	(1,058,539)	-
Վճարված տոկոսներ	(7)	-
Բաժնետոմսերի տեղաբաշխումից մուտքեր	765,131	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	765,124	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(107,409)	(10,367,421)
Արտարժույթի գծով փոխարժեքային տարբերություններ	(146,059)	257,386
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	299,021	10,409,056
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	45,553	299,021


Տնօրեն

Արմեն Գյուլիսայան




Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակրչյան



Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 9-ից 30-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Էջ 8՝ 30-ից

«ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» ՓԲԸ

2014թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

վարչության միջև 18.01.2013թ. կնքված Պետական գույքի օտարման N 600 պայմանագրով ծագած Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան 3 հասցեում գտնվող վթարային շենքի նախկին մասնավոր (ոչ պետական) սեփականատերերին 2,007 քմ մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքներ բաշխելու պարտավորությունը, որը ենթակա էր կատարման մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը, փաստացի կատարվել է 2015թ. մարտ ամսին:

Տնօրեն

Արմեն Գյուլսասյան




29 ապրիլի 2015 թ.



Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակոյան



2014 թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

ա) Ընկերության նկարագիրը և գործունեությունը

«ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից և ստացել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 2012թ. օգոստոսի 23-ին:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, գործող այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության

Անվանումը՝

«ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» ՓԲԸ

Գրանցման համարը՝

286.120.687597

Գրանցման վկայականը՝

03U837597

Գրանցման ամսաթիվը՝

23.08.2012թ.

Գտնվելու վայրը՝

ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, Պիացցա Գրանդե շենք, 108 տարածք

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02610952

Ընկերության հիմնական գործունեությունը Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան 3 հասցեում գտնվող՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող 0,5081 հա մակերեսով հողամասի վրա հասարակական նշանակության շենքի կառուցման քաղաքաշինական ծրագրի իրականացումն է: Նշված գույքը գրանցվել է «Պետական գույքն օտարելու մասին» ՀՀ կառավարության 19 հուլիսի 2012 թվականի N 916-Ա որոշման համաձայն՝ Ընկերության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության միջև 18.01.2013թ. կնքված Պետական գույքի օտարման N 600 պայմանագրի հիման վրա:

Պետական գույքի օտարման 18.01.2013թ. N 600 պայմանագրի պահանջներին համապատասխան.

1. Ընկերությունը ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի հետ 15.02.2013թ. կնքել է N 1 գործակալության պայմանագիրը, որով նշված հիմնարկին՝ որպես Գործակալի, լիազորվել են Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան 3 հասցեում գտնվող 0,5081 հա մակերեսով հողամասի վրա հասարակական նշանակության շենքի կառուցման քաղաքաշինական ծրագրի իրականացման հետ կապված բոլոր հիմնական գործառույթները,
2. Ընկերությունը պարտավորություն է ստանձնել կառուցվող շենքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումից հետո Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան 3 հասցեում գտնված վթարային շենքի նախկին մասնավոր (ոչ պետական) սեփականատերերի հետ կնքել նախնական պայմանագրեր շենքի կազմում առանձին մասնաշենքի կառուցման ավարտից հետո դրանից 2,007 քմ առանձին տարածքներ (1 քմ արժեքը 100 դրամով) սեփականության իրավունքով տրամադրելու մասին՝ հողի և ընդհանուր օգտագործման տարածքների բաժնային սեփականությամբ հանդերձ:

31.12.2014թ. դրությամբ Ընկերությունն ունի երկու աշխատակից՝ տնօրեն, տնօրենի օգնական (31.12.2013թ. դրությամբ նմանապես) և իր բոլոր հիմնական գործառույթները՝ կապված շենքի կառուցման հետ, Ընկերության անունից և հաշվին իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը՝ 15.02.2013թ. կնքված N 1 գործակալության պայմանագրի հիման վրա:

բ) Կորպորատիվ կառուցվածքը

31.12.2012թ. դրությամբ Ընկերության միակ բաժնետեր է հանդիսացել «Տանգո» ՓԲԸ-ն (գրանցման վկայական 03Ա073130, 08.08.06թ.), իսկ 2013թ. ապրիլի 25-ից Ընկերության միակ բաժնետեր է դարձել Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության անունից բաժնետոմսերի կառավարումն իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը (մինչև 2013թ. հոկտեմբերի 11-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը):

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ օրենքով վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը, իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը՝ ՀՀ կառավարության 21.08.2014թ. N 874-Ա որոշմամբ հաստատված հետևյալ անհատական կազմով.

Ն. Սարգսյան՝	ՀՀ քաղաքաշինության նախարար
Հ. Դավթյան՝	ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական
Կ. Արեյան՝	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ)
Ա. Մկրտչյան՝	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Վ. Գասպարյան՝	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ
Ա. Գաբրիելյան՝	ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետ
Հ. Սարգսյան՝	ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն (համաձայնությամբ)

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը, որի պաշտոնում 2013թ. ապրիլի 9-ից նշանակվել է Արմեն Գյուլխասյանը:

ՀՀ կառավարության 19 հուլիսի 2012 թվականի N 916-Ա որոշմանը համապատասխան Ընկերության և ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3) միջև 2013 թվականի փետրվարի 15-ին կնքված N 1 գործակալության պայմանագրի հիման վրա Ընկերության նպատակներից ու գործունեությունից բխող գրեթե բոլոր իրավաբանական գործողությունները (ներառյալ՝ պայմանագրերի կնքումն ու հաշվետվությունների պատրաստումը) Ընկերության անունից և հաշվին իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1 Հայտարարություն համապատասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

2.2 Չափման հիմունքը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

2.3 Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2015 թվականի ապրիլի 29-ին Ընկերության տնօրեն Արմեն Գյուլխասյանի և գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող Ընկերության գործակալ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ֆինանսատնտեսագիտական գործերի կառավարման բաժնի պետ – գլխավոր հաշվապահ Արմեն Կակոսյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Հասույթի ճանաչում

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում բաժնետերերի կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

- ա) Ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.
- բ) Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.
- գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
- դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.
- ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է յուրաքանչյուր ամսվա կտրվածքով գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն

գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
- բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.
- գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.
- դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

Տոկոսային հասույթը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը:

3.2. Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

- ա) գույքիլից, եթե դրա ամորտիզացիան հարկային նպատակներով նվազեցման ենթակա չէ,
- բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ

բ) ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք նույն կամ տարբեր ժամանակաշրջանում ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց,

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը, որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

3.4. Արտարժույթային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.5. Պաշարներ

Անշարժ գույքը, որը գտնվում է կառուցման ընթացքում հետագա տարիներին վաճառելու նպատակով, դասակարգվում է որպես պաշար և չափվում է ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի տարբերությունը ճանաչվում է որպես արժեզրկումից կորուստ:

Ինքնարժեքը ներառում է հողի, շինարարական, նախագծային, փորձաքննության, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքների արժեքները, ինչպես նաև գործակալական վճարները:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի մշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները, բացի գերնորմատիվային և ժամանակաշրջանի ծախսերից:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումներ են՝

- ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերաժախսի հետ.
- բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.
- գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ.
- դ) վաճառքի ծախսումները:

3.6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.7. Ֆինանսական գործիքներ

(i) Սկզբնական ճանաչումը և չափումը

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրականարժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»։ Ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա՝

- ա) պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները,
- բ) Ընկերության սեփականատերերի հետ գործարքի (որոնցում նրանք գործում են որպես սեփականատեր իրենց կարգավիճակով) արդյունք է, որի դեպքում այդ տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում:

(ii) Ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

- ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ
- բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ այն՝

- ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ
- բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ

կամ ավելի ստացողների (վերջնական ստացողներ) վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններին.

- բ1) Ընկերությունը պարտականություն չունի գումարներ վճարելու վերջնական ստացողներին, եթե այն չի հավաքագրում համարժեք գումարներ սկզբնական ակտիվից: Ընկերության կողմից մայր գումարի և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի ամբողջությամբ հետ ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը,
- բ2) փոխանցման պայմանագրի պայմաններով՝ Ընկերությանն արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը, բացառությամբ վերջնական ստացողների մոտ գրավադրման՝ որպես դրամական միջոցների հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում,
- բ3) Ընկերությունը պարտականություն ունի վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման փոխանցել իր կողմից հավաքագրված ցանկացած դրամական միջոցների հոսքեր: Ի լրումն՝ Ընկերությունն այդպիսի դրամական միջոցների հոսքերը վերաներդնելու իրավունք չունի, բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներդրումների, որոնք կատարվում են վերջնահաշվարկի այն կարճ ժամանակահատվածի ընթացքում, որն ընկնում է հավաքագրման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև, և երբ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Ընկերությունն ապաճանաչում է փոխանցված ֆինանսական ակտիվը, եթե՝

- ա) փոխանցվել են նաև ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ
- բ) ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները ոչ փոխանցվել, ոչ էլ պահպանվել են, սակայն Ընկերությունը չի պահպանել ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականություն ճանաչվում է առանձին՝ որպես ակտիվ կամ պարտավորություն:

Եթե Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը՝ դրանում իր շարունակվող ներգրավվածության չափով:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական

պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Հերազա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումները, որոնք Ընկերությանն այդ կազմակերպությունների նկատմամբ տալիս են նշանակալի ազդեցություն, վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն, Ընկերության ֆինանսական հաշվետվություններում չափվում են բաժնեմասնակցության մեթոդով: Նման իրավունք (ազդեցություն) չափահավող ներդրումները բաժնային գործիքներում, ներառյալ այդպիսի գործիքների հետ կապված ածանցյալները, չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել: Այդպիսիք չափվում են սկզբնական արժեքով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, ինչպես նաև վաճառքի համար մատչելի (ՎՀՄ) ֆինանսական ակտիվները (բացառությամբ բաժնային գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև այդպիսի բաժնային գործիքների հետ կապված ածանցյալ գործիքներ) սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ ստորև նշվածի:

ՎՀՄ ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այդ փոփոխության մեջ հեջավորված ռիսկին վերագրվող մասի, փոխարժեքային տարբերությունների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի և բաժնային գործիքների գծով հայտարարված շահաբաժինների, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտները կամ կորուստները՝ որպես վերադասակարգման ճշտում, հանվում են սեփական կապիտալից և ճանաչվում շահույթում կամ վնասում:

(iv) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկված է: Եթե գոյություն ունի որևէ նման վկայություն, ապա Ընկերությունը պետք է որոշի արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման անկողմնակալ

վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողին հայտնի դարձած դիտարկելի տվյալները կորստի հետևյալ դեպքերի վերաբերյալ՝

- ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները.
- բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.
- գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ իրավական պատճառներով փոխառուի կողմից փոխառուին զիջումների տրամադրումը, որը փոխառունայնպես չէր նախատեսի.
- դ) փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը.
- ե) ֆինանսական դժվարությունների հետևանքով այդ ֆինանսական ակտիվի համար գործող շուկայի վերացումը. կամ
- զ) դիտելի տվյալներ այն մասին վկայող, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրանց սկզբնական ճանաչումից հետո առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով, ներառյալ՝
 - զ1) խմբում փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները (օրինակ՝ վճարումների ուշացումների թվի ավելացումը կամ վարկային քարտերով փոխառուների թվի ավելացումը, որոնք հասել են իրենց պարտքային սահմանաչափին և կատարում են նվազագույն ամսական վճարում). կամ
 - զ2) ազգային կամ տեղական տնտեսական պայմանները, որոնք կոռելյացիայի մեջ են խմբի ակտիվների գծով ձախողումների հետ (օրինակ՝ փոխառուների աշխարհագրական շրջանում գործազրկության մակարդակի աճը, համապատասխան շրջանում հիփոթեքային անշարժ գույքի գների նվազումը, նավթի գնի նվազումը նավթարտադրողներին տրամադրած փոխառության գծով ակտիվների դեպքում, կամ արդյունաբերության ճյուղի պայմանների բացասական փոփոխությունները, որոնք ազդում են խմբի փոխառուների վրա):

Գործող շուկայի վերանալն այն պատճառով, որ Ընկերության ֆինանսական գործիքներն այլևս չեն շրջանառվում բաց շուկայում, դեռևս արժեզրկման վկայություն չէ: Ընկերության պարտքային վարկանիշի իջեցումը, որպես այդպիսին, արժեզրկման վկայություն չէ, չնայած այն կարող է հանդիսանալ արժեզրկման վկայություն՝ դիտարկվելով այլ առկա տեղեկատվության հետ մեկտեղ: Ֆինանսական ակտիվի իրական արժեքի նվազումն իր սկզբնական արժեքից կամ ամորտիզացված արժեքից ցածր պարտադիր չէ, որ հանդիսանա արժեզրկման վկայություն (օրինակ՝ պարտքային գործիքում ներդրման իրական արժեքի նվազումը, որն անոիսկ տոկոսադրույքի աճի արդյունք է):

Արժեզրկման անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Սկզբնական արդյունավետ տոկոսադրույք չունեցող գործիքների դեպքում զեղչումն իրականացվում է համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ նվազեցնելով ակտիվի հաշվեկշռային արժեքը՝

օգտագործելով կարգավորող հաշիվ:

3.8. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.9. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- ա. աշխատավարձը,
- բ. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը,
- գ. պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումը ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՄ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. Ակտիվների արժեզրկումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

4.2. Պահուստների որոշում

Ընկերությունը կիրառում է դատողություն՝ 2013թ. հունվարի 18-ին կնքված Պետական գույքի օտարման N 600 պայմանագրով ծագած Վազգեն Սարգսյան 3 հասցեում գտնված վթարային շենքի նախկին մասնավոր (ոչ պետական) սեփականատերերին 2,007 քմ. մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքներ բաշխելու իր պարտավորությունը գնահատելու համար՝ պահուստ ճանաչելու նպատակով: Պահուստը գնահատվում է շենքի կանխատեսվող նախահաշվային արժեքի հիման վրա, որի որոշման հիմքում ընկել են մի շարք կապալառուների և մատակարարների հետ կնքված պայմանագրեր: Ընկերությունը զեղչում է պահուստը՝ կիրառելով զեղչման այնպիսի դրույք՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

4.3. Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանությունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Ընկերության անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավարության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և ցանկացած հայտնի դատարանի կամ այդ հարցերի գծով պատասխանատու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանը: Տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՄ-ներ

5.1. Ուժի մեջ չմտած նոր ՖՀՄՄ-ներ, որոնք դեռ չեն որդեգրվել

Հրապարակված, բայց մինչև Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների հաստատումն ուժի մեջ չմտած ստանդարտները ներկայացված են ստորև: Այս ցանկն այն ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որն Ընկերության կանխատեսումներով կօգտագործվի իր կողմից հետագայում: Ընկերությունը պատրաստվում է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտները պարտադիր կիրառման ենթակա կլինեն:

- «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՄ 9-ը (հրապարակվել է 2014թ. հուլիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց, սակայն Ընկերությունը կարող է որոշել չվերաներկայացնել համեմատական տեղեկատվությունը նախորդ ժամանակաշրջանների համար: Ստանդարտը ներմուծում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր պահանջներ, որոնք փոխարինում են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում ներառված պահանջներին: Ընկերությունը դեռ չի որոշել, թե երբևանից է ստանդարտը կիրառելու:
- «Գնորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՄ 15-ը (հրապարակվել է 2014թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2017թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը փոխարինում է հետևյալ ստանդարտներին ու մեկնաբանություններին.
 - «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՄ 11,
 - «Հասույթ» ՀՀՄՄ 18,
 - «Հաճախորդի հավաքարձության ծրագրեր» ՖՀՄՄԿ 13,
 - «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր» ՖՀՄՄԿ 15,
 - «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից» ՖՀՄՄԿ 18,
 - «Հասույթ. բարդերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ» ՄՄԿ 31:

Ընկերության նախնական գնահատականներով նոր ստանդարտների (բացի ՖՀՄՍ 15-ից) կիրառումն էական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա առաջին անգամ կիրառման ժամանակաշրջանում:

5.2. Ուժի մեջ մտած նոր ՖՀՄՍ-ներ, որոնք կիրառվել են առաջին անգամ

Ընկերությունը տարվա ընթացքում կիրառել է հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-երը.

- «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում» ՀՀՄՍ 32-ի փոփոխությունները ներառում են ուղեցույց ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար ՀՀՄՍ 32-ի չափանիշների կիրառման ընթացքում անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ երկու բնագավառներում.
 - «Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստը. Փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի կազմակերպության բնականոն գործունեության ընթացքում, կազմակերպության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:
 - Քանի որ գործնականում ՀՀՄՍ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՄՍ-ն պարզաբանեց զուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՄՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:
- «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ի փոփոխությունները վերաբերում են արժեզրկված ակտիվների փոխհատուցվող գումարների բացահայտման նոր պահանջներին, եթե այդ գումարը որոշվել է ակտիվի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով:
- «Գանձույթներ» ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 21-ն իրենից ներկայացնում է «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի մեկնաբանությունը: ՀՀՄՍ 37-ը չափանիշներ է սահմանում պարտավորության ճանաչման համար, որոնցից մեկն այն է, որ պետք է լինի ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք (հայտնի է որպես պարտավորեցնող դեպք): Մեկնաբանությունը հստակեցնում է, որ գանձույթ վճարելու անհրաժեշտություն առաջացնող պարտավորեցնող դեպքը ենթադրում է համապատասխան օրենսդրական ակտերում բնութագրված այնպիսի գործունեության իրականացում, որն առաջացնում է գանձույթի վճարման անհրաժեշտություն:

Ստանդարտների կիրառումն էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

6. Բանկային ավանդներ

31.12.2014թ. դրությամբ Ընկերության բանկային ավանդները «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում 3,533.5 հազար ԱՄՆ դոլար գումարով թվով 4 պայմանագրերով տեղաբաշխված ավանդներն են, որոնց մանրամասները ներկայացված են ստորև.

Պայմանագրի				Ավանդի տարեկան տոկոսադրույքը	Ավանդի գումարն առ 31.12.2014թ.	Հաշվեգրված տոկոս 2014թ. ընթացքում
Համար	Արժույթ	Կնքման ամսաթիվ	Ավարտ		USD	
051144	USD	27.03.2013	17.03.2015	8.00%	910,000.00	72,800.00
051145	USD	27.03.2013	15.06.2015	8.25%	850,000.00	70,125.00
051748	USD	14.05.2013	18.03.2015	8.00%	850,809.00	68,064.72
051749	USD	14.05.2013	16.06.2015	8.25%	922,709.00	76,123.49
Ընդամենը, այդ թվում՝					3,533,518.00	287,113.21
Կարճաժամկետ					3,533,518.00	287,113.21

7. Պաշարներ

31.12.2014թ. դրությամբ պաշարները կազմում են 7,707,444 հազար դրամ (31.12.2013թ. դրությամբ՝ 3,249,038 հազար դրամ), որը Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան 3 հասցեում գտնվող՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0,5081 հա մակերեսով հողամասի վրա կառուցվող հասարակական նշանակության շենքի անավարտ շինարարության արժեքն է՝ ներառյալ հողի, շինարարական, նախագծային, փորձաքննության, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքների արժեքները: Շինարարության ավարտը նախատեսվում է 2015թ. դեկտեմբերի 30-ին:

8. Տրված ընթացիկ կանխավճարներ

31.12.2014թ. դրությամբ տրված ընթացիկ կանխավճարներից 2,308,005 հազար դրամը տրված է «Սպիտակ Տնակ» ՍՊԸ-ին շինարարական աշխատանքների և 7,015 հազար դրամը՝ «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ին՝ շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման նպատակով (31.12.2013թ. դրությամբ՝ տրված ընթացիկ կանխավճարներից 2,219,967 հազար դրամը տրված է «Սպիտակ Տնակ» ՍՊԸ-ին շինարարական աշխատանքների, 14,797 հազար դրամը՝ «Նարեկ Սարգսյան» ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ին նախագծային աշխատանքների և 5,000 հազար դրամը՝ «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ին՝ շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման նպատակով):

9. Դրամական միջոցներ

Հազար դրամ	31.12.2014թ.	31.12.2013թ.
Ընթացիկ հաշիվ ՀՀ դրամով	45,553	71,716
Ընթացիկ հաշիվ ԱՄՆ դոլարով	-	227,305
Ընդամենը	45,553	299,021

Հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Դրամական միջոցների հետ կապված պարտքային և արժույթային ռիսկերին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթագրություն 18-ում:

10. Այլ ընթացիկ ակտիվներ

31.12.2014թ. դրությամբ այլ ընթացիկ ակտիվները կազմում են 1,312,940 հազար դրամ (31.12.2013թ. դրությամբ՝ 409,027 հազար դրամ), ինչն իրենից ներկայացնում է հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը:

11. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 11,667,897,900 հատ 1 դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերից: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված ու լրիվ վճարված են: ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 832-Ն որոշման հիման վրա տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի ավելացում՝ 765,130,900 հատ 1 դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:

12. Ընթացիկ պահուստներ

Ընթացիկ պահուստները ներառում են 2013թ. հունվարի 18-ին կնքված Պետական գույքի օտարման N 600 պայմանագրով ծագած Վազգեն Սարգսյան 3 հասցեում գտնվող վթարային շենքի նախկին մասնավոր (ոչ պետական) սեփականատերերին 2,007 քմ մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքներ բաշխելու պարտավորությունը: Պահուստը գնահատվել է շենքի կանխատեսվող նախահաշվային արժեքի հիման վրա, որի որոշման հիմքում ընկել են մի շարք կապալառուների և մատակարարների հետ կնքված պայմանագրերը: Սկզբնական ճանաչման ժամանակ որպես պահուստի զեղչման դրույք ընդունվել է 14.8%-ը: Որպես պահուստ սկզբնապես ճանաչված գումարը՝ 616,435 հազար դրամ, դիտարկվել է որպես ձեռք բերված հողամասի սկզբնական արժեքի մաս: Պահուստի գումարի աճը ժամանակ անցնելու պատճառով (զեղչի հետպտույտ) ճանաչվում է որպես տոկոսային ծախս, որը ենթակա չէ կապիտալացման որակավորվող ակտիվի ինքնարժեքում: Պահուստի գումարի այլ ճշտումները (բացի ժամանակ անցնելով պայմանավորված զեղչի հետպտույտից)՝ ներառյալ զեղչման դրույքի փոփոխության արդյունքում առաջացողները, ճանաչվում են որպես համապատասխան ակտիվի ինքնարժեքի ճշգրտում: 2013 թ. վերջին պահուստը վերաչափվել է նոր զեղչման դրույքով, որը կազմել է 12%:

Վերոնշյալ պարտավորությունը, ըստ պայմանագրի, ենթակա էր կատարման (այսինքն՝ նախկին մասնավոր (ոչ պետական) սեփականատերերին 2,007 քմ մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքները պետք է տրամադրվեին) մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը, սակայն փաստացի տրամադրումը տեղի է ունեցել 2015 թ. մարտ ամսին:

Պահուստի մեծությունը 2014 թ. վերջին իրենից ներկայացնում է վերոնշյալ պարտավորության գնահատված արժեքը՝ առանց զեղչման:

Պահուստի շարժը տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար դրամ	2014թ.	2013թ.
Մնացորդ առ հունվարի 1	717,471	-
Սկզբնական ճանաչում	-	616,435
Զեղչի հետպտույտ	71,020	86,432
Պահուստի վերաչափում՝ տարեվերջին զեղչման դրույքի վերանայման արդյունքում	-	14,604
Պահուստի վերաչափում՝ սպասվող դրամական արտահոսքերի գնահատականի փոփոխության արդյունքում	(136,852)	-
Մնացորդ առ դեկտեմբերի 31	651,639	717,471

13. Վարչական ծախսեր

	2014թ.	2013թ.
Հազար դրամ		
Աշխատանքի վճարման ծախսեր	2,997	2,175
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսեր	971	425
Նյութական ծախսեր՝ ներառյալ վաղեմի գծով ծախսը	849	524
Դեպոզիտարիայի և պետոեզիստրի ծառայությունների գծով ծախսեր	951	745
Բանկային ծառայություններ՝ ներառյալ արտարժույթի փոխանակման ծախսերը	37,585	36,327
Վարչական այլ ծախսեր	1,467	1,064
Ընդամենը	44,820	41,260

14. Ֆինանսական ներդրումներից եկամուտներ

Տոկոսային եկամուտները ներառում են բանկային ավանդների վրա հաշվեգրված տոկոսագումարները:

2014 թվականի ընթացքում Ընկերությունը ֆիզիկական անձից ձեռք է բերել «ՖՕԿ» ՍՊԸ-ի բաժնեմասերի 100 տոկոսը 998,428.7 հազար դրամ արժեքով, որը նույն գումարով վաճառել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը՝ ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 832-Ն որոշման հիման վրա: Նշված բաժնեմասերի առուվաճառքից զուտ շահույթ կամ վնաս չի առաջացել:

15. Տոկոսային ծախսեր

Տոկոսային ծախսերը ներառում են պահուստի գեղջման հետպտույտի արդյունքում հաշվեգրված ծախսերը (տե՛ս Ծանոթագրություն 12):

16. Շահութահարկի գծով ծախս

	2014թ.	2013թ.
Հազար դրամ		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	52,767	78,385
Նախորդ տարիների հարկի ճշտում	(548)	-
Հետաձգված հարկի գծով եկամուտ (ծախս)	-	-
	52,219	78,385

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 20% է (2013թ.՝ 20%):

Շահութահարկի փաստացի (գործող) տոկոսադրույքի համապատասխանեցում.

	2014թ.	%	2013թ.	%
Հազար դրամ				
Շահույթ (վնաս) նախքան հարկումը	664,378		445,047	
Շահութահարկ ընթացիկ դրույքաչափով	132,876	20.0	89,009	20.0
Նվազեցվող ժամանակավոր տարբերություններ, որոնց գծով հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել	14,203	2.1	17,287	3.9
Զուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	(94,860)	(14.3)	(27,911)	(6.3)
	52,219	7.8	78,385	17.6

17. Կապակցված կողմերի հետ գործարքներ

17.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը մայր ընկերություն չունի: Բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը (տե՛ս Ծանոթագրություն 1):

17.2. Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2014թ.	2013թ.
Աշխատավարձ	1,800	1,499
	1,800	1,499

18. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությունները

18.1. Ընդհանուր ականք

Ընկերությունը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Ընկերության ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Ընկերության նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարության և ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Ընկերությունը, վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

18.2. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարմամբ, Ընկերության համար կառաջացնի ֆինանսական կորուստ, և հիմնականում առաջանում է բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից և բանկային ավանդներից:

Ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2014թ.	31.12.2013թ.
Դրամական միջոցներ (Ծան. 9)	45,553	299,021
Բանկային ավանդներ (Ծան. 6)	1,909,918	5,866,205
	1,955,471	6,165,226

18.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ

լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

18.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է. շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժույթային ռիսկ

Ընկերությունն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժույթային ռիսկին ենթարկվածություններն Ընկերությունը չի կառավարում:

Ընկերության արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

	31.12.2014թ.	31.12.2013թ.
	USD	USD
Հազար դրամ		
Ֆինանսական ակտիվ / պարտավորություն		
Դրամական միջոցներ	-	227,305
Բանկային ավանդներ	1,909,918	5,866,205
Արտարժույթային զուտ ենթարկվածություն	1,909,918	6,093,510

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ հրապարակած փոխարժեքները, ինչպես նաև տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքները ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
	2014թ.	2013թ.	31.12.2014թ.	31.12.2013թ.
Դրամով				
1 ԱՄՆ Դոլար	415.77	409.54	474.97	405.64

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթ հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում: Արտարժույթային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

	31.12.2014թ.		31.12.2013թ.	
	Ազդեցությունը		Ազդեցությունը	
	Շահույթի վրա	Սեփական կապիտալի վրա	Շահույթի վրա	Սեփական կապիտալի վրա
Հազար դրամ				
USD ուժեղացում 10%-ով	190,992	190,992	609,351	609,351

բ) Տոկոսադրույթային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Ընկերությունն ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական և ինչքանով ֆիքսված դրույքներին:

19. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվների վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվում են՝ դրանցից առաջացող բոլոր դրամական ներհոսքերն ու արտահոսքերը համապատասխան շուկայական տոկոսադրույքներով զեղչելու միջոցով:

Ղեկավարության կարծիքով ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

20. Պայմանական դեպքեր

20.1. Դադարական գործեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից հարուցված կամ Ընկերության դեմ հարուցված դատական գործեր չեն եղել:

20.2. Երաշխավորություններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից տրամադրված երաշխավորություններ չեն եղել:

20.3. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.4. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում նույնպես համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա:

21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

«Պետական գույքն օտարելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 19-ի N 916-Ա որոշման համաձայն՝ Ընկերության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման